

**Տնտեսական, հասարակական, կրթամշակութային վերլուծական
եռամսյա դարբենական**



Գործընկերներ՝

**ՀԱԳ/Գ միություն, Ադավեն, Երևանի զարեջուր,
Վիասֆեր ինքնեռնել ընկերություններ,
Լոռու մարզդեհարան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Էջ 2.** Խոսքը՝ խմբագրին
- Էջ 6.** Այսդեպ են խոսում հայ երեխաները
- Էջ 10.** Ճանապարհ դեպի Այսօրը, ՏՏ ոլորտում համաճխարհային ներդրման համար ՀՀ նախագահի 2017 թվականի մրցանակը Թոմի Ֆադելին
- Էջ 14. Թոմի Սորոյան.** Re-engineering the Armenian Worlds, Diasporas and Communities PAN Armenian layered, networked and Fully "Communities" and "Worlds"
- Էջ 16. Երվանդ Ջորեան.** Հայկական ինֆուլեյնս առջև ծառայած երեք խնդիրների մասին
- Էջ 18. Արսեն Ղազարյան.** Մեզ համար աղբիլի ֆանեյնսում ու դրանից հետո ընկած ժամանակահատվածը ազգային ներուժի ամրացման ժամանակահատված է
- Էջ 22. Ամասունի Տոնոյան.** Շատ լուրջ խնդիրներ ունենք ինքներս մեզ հետ: Պետությունը պիտի պարտադիր պարտականությունների ռեժիմ մշակի և կիրառի
- Էջ 24. Անուշ Ասրիկյան, Սիմոն Սիմոնյան, Էլյանուր Մաթևոսյան.** Հայաստանի Հանրապետության ներդրումային ֆադախականության արդյունքները և արդի հիմնախնդիրները
- Էջ 32.** Կինոն, մեմոն ու մեր խնդիրները
- Էջ 34.** Կինոդարան - Խոսում
- Էջ 36. Անուշ Ասրիկյան, Անժելա Պապիկյան.** Տնտեսական աճի որակական զննարկումները մեթոդաբանական հիմնախնդիրները
- Էջ 39. Կիրիկիա.** Սերունդները միմյանց կապող արժանատիքները
- Էջ 50. Ժիրայր Մխիթարյան.** Հաշվեհարկի տարածումը սահմանադրականության արդիականացման գործում
- Էջ 55.** Ռազմաօդային արտադրության դաստիարակությունը դրոշմում
- Էջ 56.** Դրոշմն ու իր սաները մի մեծ ընթացիկ են, միասին են
- Էջ 58.** Հոգեբանական գրույցներ
- Էջ 63. Արմեն Սահակյան.** В Петербурге состоялось культурно-образовательная программа «История государства Российского»
- Էջ 66-73.** Հոդվածներ արժեքի
- Էջ 74. Լուսյա Մեհրաբյան.** «Մամուլի համար չէ», հասկած վիդակից
- Էջ 78.** Եկեք ընթերցե՛ք միասին

Վկայական 03Ա 071056
Գրանցված է Երևանի Մաշտոցի տ/բ կողմից
Գրանցման համարը՝ 271.110.03050
Գրանցման տարին՝ 14.02.2006 թ.
Հասցեն՝ Երևան 78, Մարգարյան 2-րդ նրբանցք,10/8

**(010)35-13-03, (091)56-52-40
economicalus@rambler.ru**

Անսագրում արտահայտված կարծիքները կարող են չհամապատասխանել «ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ» խմբագրության և հիմնադրի տեսակետներին: Արտատպման դեպքում հղումը պարտադիր է:
2ափը 21X29.7: Ծավալը՝ 84 էջ:
Հանձնվել է տպագրության 27.11.17 թ.: Տպաքանակը՝ 500:
Գինը՝ պայմանագրային: Տպագրվել է «ՏՊԱՐԱՆ» տպարանում:
Գիտական հավակնության հոդվածները տպագրվում են մասնագետ խմբագրի դրական գրախոսության առկայությամբ:

Հրատարակության Լ տարի N35
Հիմնադիր-հրատարակիչ «Լ.Մ.Մ.Ա.» ՍՊԸ

Գլխավոր խմբագիր
և համարի թողարկման պատասխանատու
ԼՈՒՍՅԱ ՄԵՀՐԱԲՅԱՆ
Ձևավորումը՝
ՆԱՐԻՆԵ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻ

ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՐՄԵՆ ԴԱԶԱՐՅԱՆ
ՀԱԳ(Գ) միության նախագահ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎԻԿ ՍՈՒՍԱՅԵԼՅԱՆ
տեխնիկական գիտությունների թեկնածու

ԱՄԱՏՈՒՆԻ ՏՈՆՈՅԱՆ
ՀԱԳ(Գ) միության նախագահության անդամ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐՅԱՆ
«Երևանի զարեջուր» ՓԲԸ փոխտնօրեն

ՍԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ ԿԳ փոխնախարար, ֆիզմաթ. գիտ. թեկնածու,
մանկավարժական գիտ. դոկտոր

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

ՎԱԼԴԻՍԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր,
ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՍԱՄՍՈՆ ԴԱՎՈՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր,
ՀԴՏՀ Գյումրու մասնաճյուղի տնօրեն

ԱՐՄԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, սոցիոլոգիայի
դոկտոր, պրոֆեսոր, ՌԻ

ԼԵՎՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր

ԴԱՎԻԹ ՊԱՏՐԻԿՅԱՆ
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՍԱՐԳԻՍ ԳԱԼՈՅԱՆ
ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, ՀՀ ԿԳԼ
կրթության ազգային ինստիտուտ

ԹՈՆԻ ՍՈՐՈՅԱՆ
գործարար, ԱՄՆ, Կալիֆորնիա,
Վիասֆեր ինտերնեշնլ ընկ. նախագահ

ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱԶՅԱՆ
Միքայելյանի անվ. վիրաբուժության ինստիտուտի
տնօրեն

ՍԿԵՏԼԱՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ
բանաստեղծ, նկարիչ

Գիտելիքը ուժ է

ԷԿՈՆՈՄԻԿԱ ամսագրի խմբագրական խորհրդի անդամ և տնտեսական մեկնաբան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանը ամսագրի ընթերցողներին է ներկայացրել ներդրումների վերաբերյալ լրջագույն մի հոդված, որն առաջին հերթին ընթերցողի հանդեպ հարգանքից է բխում: Կարևորագույն շատ հարցերի մասին մենք կիսատ-պռատ տեղեկատվություն ունենք, և չկա խորությամբ այն հասկանալի դարձնելու աղբյուրը: Ոչ մասնագիտական լսարանի հետ մասնագիտական լեզվով խոսելը մեծ հմտություն է պահանջում: Խորագիրը մշտապես վարող պրոֆեսորը փորձել է խորքից բացահայտել խնդիրը, իսկ այն այսօր տնտեսության զարգացման գերակա պայման է: Ներդրումները որքան անհրաժեշտ են, նույնքան էլ վտանգներ են պարունակում, եթե մոռացության են տրվում երկրի ռազմավարական շահերն ու չեն հաշվարկվում ռիսկերը: Մենք այսօր հանքարդյունաբերության ոլորտում ենք հայտնվել նման ռիսկերի առջև, հարևան բարեկամ երկիրը ինքն իրեն կախվածության մեջ է դրել մեր ոչ բարեկամ երկու երկրներից՝ ոգևորվելով նրանց հսկայական ներդրումներով, ինչը վտանգում է և իր, և Հայաստանի տեսանելի ապագան՝ թեկուզև ունենալով շոշափելի տնտեսական արդյունք: Այնպես որ, ներդրումներ գրավելու համար արդյոք ճիշտ է, որ ինչեր ասես, որ չպետք է անի պետությունը: Եկեք հանդարտ ուսումնասիրենք տնտեսագիտական այս կատեգորիան, և կարողանանք զինվել գիտելիքներով ու զրագետ մասնակցենք մեր երկրի համար կարևոր տարբեր հարցերի հանրային քննարկումներին: Այսօրվա հայր իր ակտիվ դիրքորոշումը գիտելիքներով զինված պիտի արտահայտի: Ընթերցողի հանդեպ ամենայն հարգանքով գրված այս հոդվածը հարգալից ուշադրության արժանացրեք, հաջորդիվ շարունակությունն արդեն այլ համարձակությամբ կընթերցեք:

Հարգելի ընթերցող

Յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար անհրաժեշտ են մի շարք նախադրյալներ, որոնց շարքում կարևոր տեղ են զբաղեցնում ներդրումները: Բանն այն է, որ հասարակությունը չի կարող միայն սպառել, և զարգացման համար անհրաժեշտ են կուտակումներ (ներդրումներ, որոնք ապահովում են ընդլայնված վերարտադրություն, արտադրության ծավալների աճ, բնակչության բարեկեցության և կյանքի որակի բարձրացում և այլն): Ինչպես ցույց է տալիս աշխարհի բազմաթիվ երկրների փորձը, զարգացած երկրներում բնականոն զարգացումն ապահովելու համար ներդրումների ծավալները պետք է կազմեն ՀՆԱ-ի 20-25 տոկոսը, իսկ զարգացող երկրներում՝ 30-35 տոկոսը: Եվ, քանի որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է զարգացող երկրների շարքում, ՀՀ տնտեսության համար անհրաժեշտ է 3-3.5 մլրդ ԱՄՆ դոլարի չափով ներդրումների իրականացում: Մինչդեռ ՀՀ-ում իրականում այդ թվերը զգալիորեն պակաս են: Եթե նկատի ունենանք, որ հատկապես վերջին ամիսներին ներդրումների ընդգրկման ծավալների ավելացումը գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, ապա պարզ կդառնա, որ այդ հիմնախնդրի լուծումը այն հիմնական հանգամանքներից մեկն է, որը կապահովի բարձր տնտեսական աճ՝ այստեղից բխող դրական հետևանքներով:

Ներդրումները, լինելով հիմնական տնտեսագիտական կատեգորիաներից մեկը, թերևս բավարար չափով չեն ներկայացվել և մեկնաբանվել սովորական ընթերցողներին: Այդ բացը լրացնելու նպատակով նախ ներկայացվում է ներդրումների հասկացությունը և տնտեսագիտական բովանդակությունը, առանց որոնց անհնար է պատկերացնել այն քաղաքականությունը, որը վարվում է ներդրումների ոլորտում: Հոդվածաշարի մյուս մասերում ավելի առարկայական կներկայացվեն ներդրումների ծավալները, ճյուղային կառուցվածքը, ինչպես նաև ըստ երկրների իրականացված ներդրումները: Այնպես որ, համբերատար ընթերցողին առաջարկում ենք նախ ծանոթանալ ներկայացվող մյուսի տեսական մասի հետ, այնուհետև՝ ներդրումների հետ կապված հիմնախնդիրներին:

Աճոս Մարկոսյան

ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի դոկտոր, սննեսագիտության դոկտոր

Միհայել Միհայելյան

ԵՊՀ սեսական և ընդհանուր սննեսագիտության ամբիոնի դոկտոր, սննեսագիտության դոկտոր

Էլյանուրա Մաթևոսյան

ԵՊՀ ֆինանսահաշվարկի ամբիոնի դասախոս, սննեսագիտության թեկնածու

Հայաստանի Հանրապետության ներդրումային ֆաղափականության արդյունքները և արդի հիմնախնդիրները

Սերաժուլյուն

Ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ուղեկցվում է ինչպես ընդհանուր բնույթի, այնպես էլ առանձնահատուկ օրինաչափությունների պահպանմամբ և կիրառմամբ: Ըստ էության, պետության թե՛ առաջընթացը և թե՛ հետընթացը պայմանավորված է նշված ընդհանրականի և մասնակիի շարունակական փոփոխությունների և դրանց միջև համամասնությունների դինամիկայով: Այն երկրները, որոնք կարողանում են ապահովել զարգացման այդ երկու շարժիչ ուժերի՝ ընդհանուրի և մասնակիի, կայունությունը և դրանց միջև լավագույն հարաբերակցության պահպանումն ու բարելավումը, կարողանում են հասնել ինչպես տնտեսական աճի բարձր տեմպերի և դրանց արագացման, զարգացման ինտենսիվ գործոնների դերի բարձրացման, այնպես էլ էքստենսիվ գործոնների նշանակության թուլացման, հասարակական աշխատանքի արտադրողականության և դրա հիման վրա հանրային արտադրության արդյունավետության մակարդակի բարձրացման ու, հետևաբար, իրական նյութատեխնիկական ամուր հիմքերի ստեղծմանը՝ բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարելավման նպատակով:

Անկասկած է նաև, որ հասարակության տնտեսակարգը (բազիսը) և վերնաշենքը (կառավարման համակարգը) կարող են ինչպես նպաստել, այնպես էր խոչընդոտել զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանն ու դրանց գործարկմանը: Ուստի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ՀԼՄ-ները և, ընդհանրապես, հանրային կառավարման ողջ համակարգը առաջընթացի ապահովման տեսանկյունից ամբողջությամբ պետք է ծառայի և նպաստի հանրության զարգացման բավարար տեմպերն ապահովող «շարժիչ ուժերի» լավագույն միջավայրի ստեղծմանն ու անընդհատ կատարելագործմանը: Այդպիսի ընդհանրական բնույթի օրինաչափությունների շարքին է դասվում երկրի ներդրումային և ձեռնարկատիրական միջավայրը և այդպիսի միջավայրի հետևողական բարելավումը:

Ակնհայտ է նաև, որ թե՛ ներդրումային, թե՛ ձեռնարկատիրական միջավայրը յուրաքանչյուր երկրում, և նույնիսկ տարածաշրջանի երկրների խմբում, ձևավորվում և զարգանում է բազմաթիվ գործոնների ազդեցության շնորհիվ: Գործոններ, որոնք կարող են տարբերվել ոչ միայն ըստ առանձին երկրների կամ դրանց խմբերի, այլև տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ժամանակահատվածների համար: Նման իրավիճակը (կամ իրավիճակները) պայմանավորված է բազմաթիվ գործոններով և պայմաններով, որոնք կարող են թելադրված լինել և՛ ներքին, և՛ արտաքին ուժերով ու դրանց ազդեցության չափով և ինտենսիվությամբ: Բոլոր դեպքերում թե՛ ներքին և թե՛ արտաքին ուժերի ազդեցության չեզոքացման ու երկրի անվտանգության և բնակչության կենսամակարդակի ապահովման ու բարձրացման համար անհրաժեշտ միջոցների, ռեսուրսների որոնումը յուրաքանչյուր երկրում իրականացվող քաղաքականության առաջնային նպատակն է: Կկարողանա՞ արդյոք տվյալ հանրությունը մոբիլիզացնել իր լավագույն ներուժը, կառավարման հմտու-

թյուններն ու հասարակության առավել առողջ ուժերը՝ ապահովելու համար առկա իրավիճակի հիմնախնդիրների լուծումը և անցումը զարգացման պարույրի հաջորդ փուլին, դրանով իսկ առաջ տանելով երկիրը, թե՞, չկարողանալով լուծում տալ ծագած մարտահրավերներին, կհանգեցնի երկրի համար բացասական զարգացումներին (ցածր տնտեսական աճ, բնակչության իրական եկամուտների ցածր մակարդակ, բարձր ինֆլյացիա, գործազրկության բարձր մակարդակ, և որպես նշված գործոնների հետևանք՝ բնակչության զգալի չափերի հասնող արտագաղթ, որն սպառնում է ազգային անվտանգությանը):

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր տնտեսական զարգացում կարող է ընթանալ ինչպես պարզ (երբ կրկնվում են նախընթաց զարգացման չափերն ու ծավալները), այնպես էլ ընդլայնված (երբ ավելանում են նախընթաց զարգացման հնարավորությունները): Երկու դեպքում էլ հասարակությունը կատարում է նյութա-իրային, մարդկային և ֆինանսական ծախսեր: Կախված այն հանգամանքից, թե ինչպես են ծախսվում զարգացման համար անհրաժեշտ այդ ռեսուրսները, հասարակությունը կարող է հայտնվել տարբեր իրավիճակներում: Եթե դրանք օգտագործվում են անբավարար արդյունավետությամբ կամ էլ պարզապես դրանք «հանվում» են երկրից և տնտեսական աճի աղբյուր դառնում մեկ այլ երկրում, ապա տվյալ դեպքում գործ ունենք ռեսուրսների պարզապես վատ կառավարման հետ, իսկ այդ ժամանակ դժվար է ապահովել նույնիսկ պարզ վերարտադրությունը: Եթե ռեսուրսների օգտագործումը և դրանց տեղաբաշխումը տնտեսության տարբեր ոլորտների, հատվածների միջև կատարվում է հասարակության մեծ մասի շահերից ելնելով և դրանով իսկ ապահովվում է ռեսուրսներից ստացվող հատույցի առավել բարձր մակարդակ, ապա կունենանք ոչ միայն ընդլայնված, այլև արդյունավետ տնտեսություն և հասարակարգ: Միայն այս դեպքում կապահովվի թե՛ տնտեսավարող սուբյեկտների և թե՛ քաղաքացիների խնայողությունների ավելացումն ու դրանց բարձր մակարդակը, որն էլ հիմք կհանդիսանա երկրում ներդրումների ապահովման համար և զարգացման հաջորդ ժամանակահատված մտնել և առաջ գնալ տնտեսապես ավելի հզորացած ու ընդլայնված վերարտադրության համար ավելի մեծ ներուժով և հնարավորություններով:

Այսպիսով, ստացվում է, որ առաջընթացի հիմնական շարժիչ ուժերից են ներդրումները, առանց որոնց չի կարող գոյատևել և ոչ մի ժամանակակից պետություն և ժողովուրդ: Այդ իսկ պատճառով ՀՀ կառավարության ծրագրում (2017-2022 թթ.) զգալի ուշադրություն է դարձվել նաև ներդրումներին ու ներդրումային քաղաքականությանը: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովում կառավարության ծրագիրը ներկայացնելիս ՀՀ վարչապետն իր ելույթում նշեց, որ ներդրումային քաղաքականությունն իրականացվելու է երեք հիմնական ուղղություններով՝

- ▶ ներդրողների պաշտպանության և երաշխիքների տրամադրման ինստիտուտների ամրապնդում,
- ▶ ընդհանուր ներդրումային միջավայրի բարելավման քաղաքականությանը զուգահեռ՝ ոլորտների և ներդրող-

ների հետ թիրախավորված անհատական աշխատանք,
 ▶ ստեղծարար և ինովացիոն տեխնոլոգիական զարգացման խթանում բոլոր ոլորտներում¹:

Ասվածն ամենևին էլ չի նշանակում, որ ներդրումների ընդգրկման և դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները միայն նոր են հայտնվել ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Դրանք միշտ էլ եղել են տնտեսական քաղաքականության առանցքային հարցերի շրջանակում և կարևորագույն թիրախների շարքում: Ամբողջ խնդիրն այն է, թե ինչ հաջողությամբ է իրականացվում դրա լուծումը, ինչ ձեռքբերումներ և ինչ բացթողումներ են թույլ տրվել այդ քաղաքականության իրականացման ճանապարհին: Այս հարցերի պատասխանները որոնելիս և իրականացվող քաղաքականությանը գնահատականներ տալիս պետք է ելնել տնտեսագիտական այն օրինաչափության պահպանման անհրաժեշտությունից, որը գործում է ներդրումների ծավալի և ՀՆԱ-ի մեծությունների միջև: Ըստ այդ հարաբերակցության, յուրաքանչյուր երկրում, որտեղ ցանկանում են ընդլայնված և արդյունավետ վերարտադրություն ապահովել, անհրաժեշտ է որպեսզի տարեկան ներդրումների ծավալը կազմի տվյալ երկրի ՀՆԱ-ի 20-25%-ը: Եթե ելնելու լինենք այս պահանջի իրականացումից, ապա ստացվում է, որ ՀՀ-ում տարեկան անհրաժեշտ է 2,0-2,5 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին:

Նույնիսկ անգն աչքով է տեսանելի, որ անկախության տարիներից հետո Հայաստանի Հանրապետությունը դեռևս շատ հեռու է իր պոտենցիալ աճի մակարդակից: Եկանուտը, որ կորստի է մատնվել 2008թ.-ի համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի տարիներին, դժվար է վերականգնել: Դա կպահանջի աճի մակարդակի արագացում, հետագայում նաև արագացված աճի տեմպի պահպանում: Արագացված աճն էլ իր հերթին կպահանջի ավելի շատ ներդրումներ նյութական, ֆինանսական և մարդկային կապիտալում: Իսկ իրականացված ներդրումների արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է պետության ակտիվ միջամտություն: Պետությունը ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով նպաստում է տնտեսությունում ներդրումների ներգրավմանը և դրանց արդյունավետ տեղաբաշխմանը: Սակայն արդյունավետ ներդրումային քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար խիստ կարևոր է տնտեսությունում առկա հիմնախնդիրների ճանաչումը: Նախ, անհրաժեշտ է ուսումնասիրել երկրում առկա ներդրումային միջավայրը, տալ դրա գնահատականը, այնուհետև պարզել ներդրումային ենթակառուցվածքի անարդյունավետ գործունեության պատճառները, մանրամասն վերլուծության ենթարկել ներդրումային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների ազդեցությունը տնտեսության վրա: Այս հիմնախնդիրների ճանաչումը հնարավորություն կտա պետությանը մշակել առավել արդյունավետ և հիմնավորված ներդրումային քաղաքականություն:

Այլ կերպ ասած, անհրաժեշտություն է առաջանում վերհանել Հայաստանում առկա ներդրումային քաղաքական

ության թերությունները, ինչպես նաև այդ թերությունների առաջացման պատճառների բացահայտման միջոցով դրանց վերացման համար մշակել անհրաժեշտ միջոցառումներ: Եվ, փաստորեն, դրանով օժանդակել ՀՀ տնտեսությունում արդյունավետ ներդրումային քաղաքականության իրականացմանը: Այս նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ▶ ուսումնասիրել ՀՀ-ում ներդրումային քաղաքականության ձևավորման առանձնահատկությունները,
- ▶ տալ ՀՀ ներդրումային միջավայրի գնահատականը,
- ▶ հետազոտել ներդրումների ներհոսքի և արտահոսքի ուղղությունները,
- ▶ վերհանել ֆինանսական միջնորդների ոչ արդյունավետ գործունեության պատճառները,
- ▶ բացահայտել ներդրումների ներքին աղբյուրների անարդյունավետ օգտագործման պատճառները,
- ▶ պարզել օտարերկրյա ներդրումների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա,
- ▶ մշակել միջոցառումներ, որոնք կհանգեցնեն ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին:

1. Ներդրումային քաղաքականության բովանդակությունը և նշանակությունը տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում

1.1. Ներդրումային քաղաքականության էությունը, խնդիրները, տարրերը և մշակման փուլերը

Ներդրումային քաղաքականությունը ցանկացած պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է, և այն բխում է երկրի տնտեսական զարգացման նպատակներից՝ արդյունավետ ներդրումային գործունեության միջոցով երկրի տնտեսական աճի բարձր տեմպերի և, հատկապես, ազգային եկամտի առավելագույն ծավալի ապահովում:

Ներդրումային քաղաքականությունը, որպես կանոն, ձևավորվում է կառավարության որոշումներով և իր արտացոլումն է գտնում պետական ներդրումային ծրագրերում և պետությունում:

Ներդրումային քաղաքականությունը բնութագրվում է որպես ներդրումային գործունեության պետական կարգավորման գործընթաց, ներդրումների հոսքերի ակտիվացմանը և խթանմանն ուղղված միջոցառումների ամբողջություն:

Ներդրումային քաղաքականության իրականացման կարևոր պայմաններից մեկը պետության կողմից ներդրումային գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի ընդունումն է: Ներդրումային քաղաքականության իրականացման գործում պետության ուղղակի մասնակցությունն արտահայտվում է ներդրումային մախագծերի մշակման, հաստատման և պետությունից հաշվին ֆինանսավորման միջոցով: Ընդհանուր առմամբ պետության կողմից մշակված ներդրումային քաղաքականությունն ուղղված է ընդհանուր տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական ենթակառուցվածքներ

ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի ելույթը 2017թ.-ի հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովում ՀՀ կառավարության ծրագիրը ներկայացնելիս, <http://www.gov.am/am/news/item/13047/>:

րի զարգացմանը: Այն իրականացվում է պետական ներդրումների միջոցով, ինչպես նաև տնտեսական լծակների օգնությամբ մասնավոր ներդրումների խթանման միջոցով:

Ներդրումային քաղաքականության էությունը բացահայտում են լուծում պահանջող հետևյալ խնդիրները.

1. Ներքին ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում, այդ նպատակների համար խնայողությունների կուտակում,

2. Տնտեսության կառուցվածքային քաղաքականության մեջ պետական ներդրումների դերի բարձրացում,

3. Արտասահմանյան ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

Տարբերում են ներդրումային գործունեության վրա պետական ներգործության պասիվ և ակտիվ մեթոդներ.

▶ պասիվ մեթոդների օգտագործումը կապված է վերարտադրության պայմանների և սպառման մասին տեղեկատվության ապահովման հետ: Դրանք ներառում են նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների հիմնավորումը:

▶ ակտիվ մեթոդներն են՝ (1) գործարարների համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ առաջին հերթին բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը, ինչպես նաև ներքին և արտաքին ներդրումները խթանող հարկային և անորտիզացիոն քաղաքականության մշակումը, (2) պետության ուղղակի մասնակցությունը երկրի համար կարևոր և արդյունավետ նախագծերում և (3) պետության մասնակցությունը ենթակառուցվածքային օբյեկտների ստեղծմանը:

Ներդրումային քաղաքականության հիմնական տարրերից են.

▶ ներքին և արտաքին կապիտալի ներգրավման ձևերն ու մեթոդները,

▶ ներդրումային կապիտալի տեղաբաշխման սկզբունքներն ու մեթոդները:

Ելներով դրանց կարևորությունից՝ դիտարկենք այդ տարրերն ավելի մանրամասն.

1. Ներքին և արտաքին կապիտալի ներգրավման գործում պետությունը, որպես տնտեսական լծակներ ու կառուցակարգեր, կարող է օգտագործել հարկային քաղաքականությունը, ներդրումային հարկային վարկը, անորտիզացիան, տոկոսադրույքը, պետական գնումները, ինֆլյացիոն քաղաքականությունը, երաշխավորված փոխառությունները, վարկերը և այլն:

Հարկային քաղաքականություն. Եթե արտադրական գործունեությունից առաջացած արդյունքների մեջ հարկային դրույքաչափերը կազմում են մեծ մասնաբաժին, ապա նվազում է անհատների՝ գործարարական ծրագրերով աշխատելու և դրանք իրականացնելու շահագրգռվածությունը: Հարկային բարձր դրույքաչափերը կարող են վանել երկրի ամենաարտադրողական բնակիչներին դեպի այլ երկրներ, որտեղ հարկային դրույքաչափերն ավելի ցածր են: Ավելին, արտասահմանցիները կարող են հրաժարվել ներդրումային ծրագրերի ֆինանսավորումից: Սակայն հարկերը, որոշ տնտեսագետների կարծիքով, կարող են նաև ուղղակիորեն խթանել մասնավոր ներդրումները: Դա տեղի կունենա այն ժամանակ, երբ հարկերը կօգտագործվեն ներդրումների արտադրողականության բարձրացման ուղղված պետական ծախսերի ֆինանսավորման նպատակով: Գնահատարիների վրա կատարվող ավելի մեծ ծախսերը հանգեցնում են տրանսպորտային սարքավորումների համար կատարվող ներդ-

րումների աճին: Ոստիկանության և հակահրդեհային ծառայությունների ծախսերի ավելացումը նպաստում է մասնավոր ներդրումների աճին: Հետևաբար, պետք է միայն կարծել, որ ավելի փոքր պետական հատվածը՝ ցածր հարկերի պայմաններում, անհրաժեշտաբար խթանում է մասնավոր ներդրումների աճը: Կարևոր հարցն այն է, թե ի՞նչ նպատակներով են այդ հարկերն օգտագործվում:

Հարկ է նշել, որ, օրինակ, ԱՄՆ-ում կապիտալից օգուտը հարկվում է ավելի մեծ դրույքաչափերով, քան մյուս երկրներում: Բարձր եկամուտ ունեցող զարգացած այնպիսի երկրներում, ինչպիսիք են Բելգիան, Իտալիան և Նիդեռլանդները, կապիտալից ստացվող օգուտն ամբողջությամբ ազատված է հարկումից, իսկ Գերմանիայում հարկեր չեն կիրառվում վեց և ավելի ամիսներ պահված կապիտալից ստացված օգուտի նկատմամբ:

Աշխարհում ամենաարագ զարգացող չորս երկրները՝ Չոնկոնգը, Սինգապուրը, Հարավային Կորեան և Մալայզիան կապիտալից ստացվող օգուտը նույնպես չեն հարկում: Կանադայում, Ճապոնիայում և Ֆրանսիայում կապիտալից ստացված օգուտը հարկելիս կիրառվում են ավելի ցածր դրույքաչափեր, քան ԱՄՆ-ում է:

Ներդրումային հարկային վարկ. Երբ կապիտալի ձևավորման ընթացքը թվում է անբավարար, կամ տնտեսությունը զարգանում է դանդաղ, ներդրումային քաղաքականության պատասխանատուները ժամանակ առ ժամանակ ապավինում են ներդրումների նկատմամբ կիրառվող հարկային վարկերին: Ներդրումային հարկային վարկը կապիտալի կուտակումը խթանող օրենքի դրույթ է: Ներդրումային հարկային վարկը ներդրումային ապրանքների ձեռքբերման վրա ծախսված ամեն մի դրամական միավորից որոշակի մեծությամբ կրճատում է կազմակերպության հարկային վճարումները: Քանի որ կազմակերպության հարկերի իջեցման հաշվին նոր կապիտալի ձեռքբերման ծախսերի մի մասը փոխհատուցում է, ապա հարկային զեղչերի համակարգը հանգեցնում է կապիտալի միավորի գնման ծախսերի կրճատման: Այլ կերպ ասած, ներդրումային հարկային վարկն ապահովում է ներդրումների ավելացումը: Բազմաթիվ տնտեսագետներ ենթադրում են, որ ներդրումային հարկային վարկը ներդրումների խթանման ամենաարդյունավետ խթաններից մեկն է: Ըստ որում, պետք է տարբերել տնտեսական քաղաքականության փոփոխությունները՝ ժամանակավոր և մշտական: Ներդրումների նկատմամբ կիրառվող հարկային վարկերի ժամանակավոր աճն, օրինակ, կարող է հանգեցնել կապիտալի ծախսերի ավելացման ավելի մեծ ծավալներով, քան մշտական աճը, քանի որ այդ դեպքում ներդրողներն առանց ժամանակ կորցնելու կենտրոնանում են ներդրումներ կատարելու, քանի դեռ արտոնությունն ուժի մեջ է:

Ամորտիզացիա. ինչպես հայտնի է, շահույթի որոշման ժամանակ ամորտիզացիան մեկնաբանվում է որպես ծախս և հանվում է շահույթից: Այլ խոսքով, ամորտիզացիան նշանակում է, թե ինչ արժե այսօր մաշված կապիտալին փոխարինելը: Ամորտիզացիայի մեծությունը հանելիս կազմակերպությունները ելնում են փաստացի կատարված ծախսերից, այսինքն՝ հենվում են գնի վրա, որը վճարվել է կապիտալ բարիքների գնման ցիկլին: Ուստի, եթե պետության կողմից սահմանված ամորտիզացիոն նորմը փոքր է, հետևաբար ամորտիզացիոն հատկացումների ժամկետը երկար է, ապա ինֆլյացիայի ազդեցությունն անխուսափելի է: Ինֆլյացիայի ժամանակ վերականգնման արժեքը գերազանցում է նախնական արժե-

քին, ինչի հետևանքով էլ ամորտիզացիայի մեծությունը փոքրանում է և մեծանում է շահույթը: Արդյունքում, նույնիսկ շահույթի զերոյական մեծության դեպքում կազմակերպությունը վճարում է շահութահարկ, որն էլ կապիտալ ունենալը դարձնում է անցանկալի: Ուստի, այս դեպքում կարևորվում է պետության կողմից արագացված ամորտիզացիայի մեթոդի կիրառումը:

Տոկոսադրույք. երբ երկրի կենտրոնական բանկը սահմանում է տոկոսադրույքը, դա խոչընդոտում է կապիտալի շուկայում դրամական միջոցներ խնայողների և ներդրողների փոխադարձ կապը, ինչպես նաև դրամական հոսքերի բաշխումը՝ դեպի նպատակահարմար հարստություն ստեղծող ծրագրեր: Ավելի, երբ տոկոսադրույքի սահմանումը համատեղվում է փողի ինֆլյացիոն քաղաքականության հետ, արդյունքում ստացված իրական տոկոսադրույքը կարող է բացասական լինել: Բացասական տոկոսադրույքը իր հերթին կառաջացնի կապիտալի արտահոսք, քանի որ տեղական ներդրողները կսկսեն փնտրել ավելի հաստատուն և դրական հատույցներ արտասահմանում, իսկ արտասահմանյան ներդրողները ամբողջապես կխուսափեն երկրի ներուժային ներդրումային ծրագրերից: Այս տիպի քաղաքականությունները քայքայում են կապիտալի շուկաները, քանի որ կասեցնում են ներդրումները և տնտեսական աճը:

Պետական գնումներ. պետական գնումների ծավալի ավելացումը հանգեցնում է ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի ավելացմանը: Բայց քանի որ թողարկման ընդհանուր ծավալը տրված արտադրության գործոնների դեպքում հաստատագրված է, ապա պետական գնումների ծավալի ավելացումը կարող է իրականացվել միայն պահանջարկի մի այլ տարրի փոքրացման հաշվին: Որքանով տնօրինվող եկամուտն անփոփոխ է, սպառման ծավալը նույնպես անփոփոխ է: Պետական գնումների ծավալի ավելացումն, այդ դեպքում, պետք է իրականացվի ներդրումների ծավալի նույնքան փոքրացման հաշվին: Ներդրումների ծավալի կրճատում առաջացնելու համար պետք է մեծացնել տոկոսադրույքը: Յետևաբար, պետական գնումների ծավալի ավելացումն առաջ է բերում տոկոսադրույքի աճ և ներդրումների ծավալի կրճատում: Այս դեպքում տեղի է ունենում պետական գնումների ազդեցությամբ ներդրումների արտամղում:

Ինֆլյացիոն քաղաքականություն. ներդրումների ներգրավման գործում նշանակալի ազդեցություն ունի ինֆլյացիայի սպասվող տեմպը: Ամենաընդհանուր իմաստով ինֆլյացիայի տեմպի բարձրացումը հանգեցնում է ներդրումներից ակնկալվող եկամտի արժեզրկմանը: Այդ պատճառով էլ ինֆլյացիայի տեմպի աճը, հետևաբար նաև ինֆլյացիոն սպասումները խոչընդոտում են ներդրումային գործունեության ակտիվացմանը:

Մաքսային քաղաքականություն. երբեմն պետության կողմից ներմուծման խոչընդոտման համար կարող են սահմանվել ներմուծման բարձր մաքսային տուրքեր կամ քանակական կոշտ սահմանափակումներ (քվոտաներ), ինչը կհանգեցնի նրան, որ արտաքին կապիտալը կհոսի տվյալ երկիր՝ արտադրությունն այնտեղ կազմակերպելու համար:

Ներքին և արտաքին կապիտալի ներգրավման համար պետությունը կարող է օգտագործել նաև արտոնյալ վարկերը, երաշխավորված փոխառությունները, էներգամատակարարմանը և տրանսպորտին հատկացվող դոտացիաները, ճանապարհների և երկաթուղու կառուցումը և

այլն:

2. Ներդրումային քաղաքականության տարրերի երկրորդ խումբն իրենից ներկայացնում էր ներդրումային կապիտալի տեղաբաշխման սկզբունքներն ու մեթոդները:

Ներդրումային կապիտալի տեղաբաշխման սկզբունքներն ու մեթոդները տնտեսությունում խիստ տարբեր են: Մասնավոր կազմակերպությունները մեզանում ներդրում են կապիտալը ավանդական տնտեսական գործունեության տեսակներում, ինչպիսիք են՝ արդյունահանող և մշակող արդյունաբերությունը, մրգերի և բանջարեղենի տեղափոխումը կազմակերպող ավտոտրանսպորտում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, ինչպես նաև կապիտալի նոր տեսակներում: Կառավարությունն էլ իր հերթին ներդրում է կատարում հասարակական կապիտալի կիրառման տարբեր ոլորտներում, որն անվանում են արտադրական ենթակառուցվածքներ, ինչպիսիք են՝ ճանապարհները, կամուրջները և ջրանցքները: Դրա հետ մեկտեղ գոյություն ունի մարդկային կապիտալ՝ գիտելիքներ և ունակություններ, որոնք աշխատողները ձեռք են բերում կրթության միջոցով՝ մանկությունից մինչև հասուն տարիքը:

Քաղաքական գործիչները, որոնք փորձում են խթանել տնտեսական աճը, պետք է առնչվեն այն հիմնահարցի հետ, թե կապիտալը ինչպես պետք է տեղաբաշխվի տնտեսությունում և թե կապիտալի ինչ տեսակ է անհրաժեշտ տնտեսությանը: Այլ խոսքով, թե կապիտալի որ տեսակն է ապահովում առավելագույն սահմանային արդյունք: Կապիտալի առավել բարձր սահմանային արդյունք ունեցող տնտեսության ոլորտները, բնականաբար, հանդես են բերում ավելի մեծ ցանկություն շուկայական տոկոսադրույքով ձեռք բերելու փոխառու միջոցներ՝ նոր ներդրումների ֆինանսավորման համար: Բազմաթիվ տնտեսագետներ գտնում են, որ կառավարությունը պետք է ստեղծի կապիտալի տարբեր տեսակների համար «միատեսակ խաղի պայմաններ»: Օրինակ՝ երաշխավորի կապիտալի բոլոր տեսակների համար հավասար հարկային դրույքաչափեր: Այդ դեպքում կառավարությունը կնպաստի շուկայում կապիտալի արդյունավետ տեղաբաշխմանը:

Մեկ այլ խումբ տնտեսագետներ էլ առաջարկում են, որ կառավարությունը ակտիվորեն խթանի կապիտալի ազատ տեսակները, հատկապես, եթե դրանք կարող են ստեղծել ավելի մեծ թվով աշխատատեղեր: Եթե, օրինակ, կապիտալի տեղաբաշխումը մշակող արդյունաբերությունում ստեղծում է ավելի մեծ թվով աշխատատեղեր, քան արդյունահանող արդյունաբերությունում, ապա կառավարությունը պետք է հարկային օրենսդրությունն օգտագործի մշակող արդյունաբերությունում ներդրումների խթանման համար: Նմանատիպ քաղաքականության հաջողության համար կառավարությունից պահանջվում է տարբեր տնտեսական գործառնությունների նկատմամբ հանդես բերել արտաքին արդյունքների գնահատման ունակություն: Տնտեսագետների մեծ մասը կասկածանքությամբ է վերաբերվում նման քաղաքականությանը, քանի որ նմանօրինակ չափումների մեթոդաբանությունը և արդյունքները խիստ տարբեր են: Դրա պատճառն այն է, որ գոյություն ունեն ներդրումների չափման և արդյունավետության գնահատման տարբեր մոտեցումներ՝ տնտեսական, սոցիալական, սոցիալ-տնտեսական, ոլորտային, ժողովրդատնտեսական և այլն:

Մինչև օրս տնտեսագետների մի մասը հաստատում է, որ արտադրական ենթակառուցվածքներում առավել մեծ

չափով ներդրումները տնտեսությունը կդարձնեն ավելի արդյունավետ: Այս տեսակետը տնտեսագետների շրջանում միաժամանակ ունի և՛ աջակցություն, և՛ քննադատություն: Խնդիրն այն է, որ հասարակական կապիտալի արդյունավետության չափումը բարդ խնդիր է: Մասնավոր կապիտալից ստեղծված շահույթը չափելի է, իսկ հասարակական կապիտալից ստացված շահույթը «ցրված» է, ուստիև դժվար չափելի է:

Տնտեսագետների մեկ այլ խումբ էլ գտնում է, որ երբ ներդրումային միջոցները տնտեսությունում տեղաբաշխվում են պետության կողմից և ոչ թե շուկայի միջոցով, տարբեր սկզբունքներով են սկսում գործել: Շուկային փոխարինում է քաղաքականությունը, որի հետևանքով անհաջող ներդրումային ծրագրերն ավելի շուտ կրճատում են երկրի հարստությունը, քան ավելացնում: Արևելյան եվրոպայի և նախկին Խորհրդային Միության փորձը վկայում է այս հիմնադրույթի ճշմարտացիությունը: Այս երկրների ներդրումային հնարավորություններն աշխարհում ամենաբարձրերից են եղել: Այս երկրների կենտրոնական պլանավորողներն ազգային արդյունքի մեկ երրորդը վեր են ածել ներդրումների: Սակայն ներդրման այդ բարձր մակարդակը շատ քիչ է բարձրացրել բնակչության կենսամակարդակը: Ավելի շուտ քաղաքական, քան տնտեսական հիմնադրույթներով է որոշվել, թե որ ներդրումային ծրագիրը պետք է իրագործվի: Յետևաբար ներդրումային միջոցները հաճախ վատնվել են ռազմական և քաղաքական թանկ ծրագրերի վրա:

Ներդրումային քաղաքականության մշակումն ընդգրկում է հետևյալ հիմնական փուլերը.

1. Երկրի տնտեսության տնտեսական ու ֆինանսական ռազմավարությանը համապատասխան՝ ներդրումային գործունեության առանձին ուղղությունների ձևավորում,

2. ներդրումային միջավայրի և ներդրումային շուկայի իրավիճակի հետազոտում. ուսումնասիրվում են ներդրումների առանձին ձևերի, ներդրումային ամբողջ գործունեության իրավական պայմանները: Վերլուծվում են ներդրումային շուկայի ընթացիկ իրավիճակը և այն պայմանավորող գործոնները: Կանխատեսվում է տնտեսության ներդրումային գործունեության հետ կապված՝ կապիտալի շուկայի առաջիկա իրավիճակը,

3. ներդրումային առանձին օբյեկտների ընտրություն և դրանք համապատասխանեցում երկրի ներդրումային քաղաքականությանը: Ներդրումային քաղաքականության մշակման այդ գործընթացում ուսումնասիրվում է ներդրումային շուկայի ընթացիկ առաջարկը: Ուսումնասիրման համար ընտրվում են առանձին ներդրումային նախագծեր, որոնք առավել համապատասխան են երկրի տնտեսության ներդրումային գործունեության ուղղությանը: Դիտարկվում են տեխնիկայի և տեխնոլոգիաների ձեռքբերման հնարավորությունները և պայմանները, որոնք անհրաժեշտ են նախկին տեսակների նորացման համար,

4. ներդրումային ռեսուրսների անհրաժեշտ ծավալի որոշում և դրանց աղբյուրների կառուցվածքի օպտիմալացում: Ներդրումային քաղաքականության մշակման այս փուլում կանխատեսվում է ներդրումների ընդհանուր պահանջարկը՝ նախատեսվող ծավալները ներդրումային գործունեություն իրականացնելու համար: Ելնելով կապիտալի շուկայի իրավիճակից՝ որոշվում է ներդրումային գործունեության համար փոխառու ֆինանսական միջոցների ներգրավման նպատակահարմարությունը,

5. ներդրումային ծրագրերի իրականացումն արագաց-

նելու ուղիների ապահովում: Նախատեսվող ներդրումային ծրագրերը պետք է կատարվեն հնարավորին չափ արագ, քանի որ ներդրումային ծրագրի իրականացման բարձր տեմպերը նպաստում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացմանը: Բացի դրանից, ինչքան արագ են իրականացվում ներդրումային ծրագրերը, այնքան արագ են սկսում ձևավորվել դրամական հոսքերը՝ շահույթի և ամորտիզացիոն հատկացումների տեսքով: Ներդրումային ծրագրերի իրականացման արագացումը կրճատում է փոխառու կապիտալի օգտագործման ժամանակը:

1.2. Պետության դերը ներդրումային քաղաքականության կարգավորման գործում

Ներդրումային քաղաքականության մշակման գործում պետության դերը որոշվում է մի շարք գործոններով՝ շուկայական հարաբերությունների զարգացվածության աստիճանով, տնտեսական իրավիճակի առանձնահատկություններով, ազգային զարգացման առաջադրված խնդիրների բնույթով և այլն:

Տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը տնտեսության կայուն աճի ապահովումն է, որն իրագործելու համար առաջնային խնդիրների շարքն է մղվում ներդրումային ակտիվության խթանումը: Իսկ ներդրումային գործունեության ակտիվացումը հնարավոր է միայն համակողմանիորեն մշակված, հետևողական և արդյունավետ պետական ներդրումային քաղաքականության արդյունքում: Ներդրումային քաղաքականությունը, կամ, որ նույնն է, ներդրումային գործընթացի պետական կարգավորման ծրագրերը կազմվում են որոշակի տեսագործական հայացքների հիման վրա: Տնտեսական պրակտիկայում որպես տնտեսության կարգավորման հենքային հիմնադրույթներ օգտագործվում են երկու հակադիր ուղղությունները՝ քեյնսականությունը և մոնետարիզմը: Քեյնսյան տեսության կողմնակիցները շեշտը դնում են տնտեսական աճի նպատակների իրագործման վրա, իսկ մոնետարիզմի ներկայացուցիչները՝ դրամաշրջանառության, գների մակարդակի և արժույթների փոխարժեքների կայունացման վրա:

Քեյնսյան հիմնադրույթը. Քեյնսյան հիմնադրույթի համաձայն ներդրումային պահանջարկը ՅՆԱ-ի դինամիկան որոշող կարևորագույն բաղադրիչն է: Մասնավոր ներդրումային պահանջարկը փոփոխում է, իսկ դա պայմանավորված է հետևյալ գործոններով.

► խնայել և ներդնել ցանկացող սուբյեկտները հանդես են գալիս որպես առանձին խմբեր, որոնք խնայողությունների և ներդրումների վերաբերյալ որոշումներն ընդունում են տարբեր հիմքերի վրա,

► ներդրումների ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում ոչ միայն ընթացիկ խնայողությունները, այլ նաև տնային տնտեսությունների կանխիկ խնայողությունները և վարկային կազմակերպությունների կողմից դրամական միջոցների թողարկումը: ՈՒստի, քեյնսյան հիմնադրույթը ենթադրում է տնային տնտեսությունների կանխիկ խնայողությունների և առևտրային բանկերի վարկերի փոփոխության դեպքում խնայողությունների և ներդրումների ծավալների միջև խզման հնարավորությունը:

Մասնավոր ներդրումային պահանջարկի փոփոխությունն առաջացնում է տնտեսության անկայունություն, ինչով էլ պայմանավորվում է պետական միջամտության անհրաժեշտությունը, որի հիմքում պետք է ընկած լինի գների և տոկոսադրույթի դինամիկայի վրա ազդեցությունը:

Քեյնսյան մոդելի տրամաբանությունը հետևյալն է. նախ ենթադրվում է, որ շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի կանխատեսվող մեծության դեպքում որոշվում է վարկային տոկոսադրույքի հավասարակշիռ արժեքը: Քեյնսյան հանձնարարականների համաձայն՝ պետությունը ներդրումների խթանման նպատակով մեծացնում է փողի առաջարկը: Փողի նկատմամբ կայուն պահանջարկի պայմաններում շուկան դրան արձագանքում է տոկոսադրույքի իջեցմամբ: Փողի շուկայում փոփոխություններն իրենց արձագանքն են գտնում ներդրումային շուկայում: Փոխառության տոկոսադրույքի իջեցումը բերում է ներդրումների աճին՝ որպես վարկի էժանացման և արժեթղթերի ընթացագների բարձրացման հետևանք: Արտադրությունում կատարվող ներդրումների աճի պայմաններում մեծանում է ազգային արդյունքի ծավալը և եկամուտը, որի վրա ներդրումների հավելածը գործում է բազմապատկչային ազդեցություն:

Այսպիսով, պետության կարճաժամկետ ազդեցությունը բերում է ներդրումների և արտադրության աճի խթանմանը: Սակայն շուկայական մեխանիզմը, արձագանքելով եկամտի մակարդակի բարձրացմանը և համապատասխան փողի պահանջարկի աճին, բարձրացնում է տոկոսադրույքը, ինչը խոչընդոտում է ներդրումները: Այսպիսով, շուկայական մեխանիզմը, արձագանքելով պետության միջամտությանը, վերջին հաշվով մարում է սկզբնական ազդակը: Դա նշանակում է, որ երկարաժամկետ հեռանկարում տոկոսադրույքը թույլ է ենթարկվում կարգավորմանը: Փողի զանգվածի հետագա մեծացման քաղաքականությունը արդյունք չի տա, քանի որ տոկոսադրույքը չի իջնի որոշակի նվազագույն արժեքից ներքև: Բացի այդ, կանխիկ փողի զանգվածի ավելացումը մեծացնում է վճարունակ սպառողական պահանջարկը, ինչը նվազող ապրանքային առաջարկի պայմաններում հանգեցնում է գների աճի: Քանի որ դրամավարկային քաղաքականությունը չի գործում, տնտեսության կայունացման համար քեյնսյան մոդելը ենթադրում է ֆիսկալ (հարկաբյուջետային) քաղաքականության կիրառումը: Մասնավորապես, պետական ծախսերի ավելացումը կարող է խթանիչ ազդեցություն ունենալ ներդրումային պահանջարկի վրա, սակայն այն բերում է բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) ավելացմանը: Բյուջեի պակասուրդի ֆինանսավորման համար անհրաժեշտ է, որ մասնավոր ներդրումների շուկայից դրամական միջոցները հոսեն դեպի պետական պարտատոմսերի շուկա: Դրա արդյունքում խնայողությունները փոխանակ ուղղվելու ներդրումային պահանջարկի բավարարմանը, կուղղվեն բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը: Իսկ փոխառու կապիտալի շուկայում դրամական միջոցների պակասը կհանգեցնի վարկային տոկոսադրույքի աճին, որն էլ կկրճատի ներդրումները: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ երկարաժամկետ հեռանկարում քեյնսյան հանձնարարականները այնքան էլ արդյունավետ չեն: Քեյնսյան հանձնարարականների օգտագործումը հնարավոր է հետևյալ պայմանների դեպքում.

- ա) ճգնաժամային ժամանակաշրջաններում, որոնք պահանջում են պետության միջամտության ուժեղացում,
- բ) էմիսիայի և ինֆլյացիայի տեմպի նկատմամբ վերահսկողության հաստատման պայմաններում,
- գ) մրցակցության պետական աջակցման դեպքում:

Մոնետարիզմ. Մոնետարիստները, հանդիսանալով շուկայական տնտեսության հավասարակշռության նոր դասական տեսության հետևորդները, պահպանում են

դրա հիմնական դրույթը խնայողությունների և ներդրումների նույնականության վերաբերյալ: Ի հակադրություն քեյնսականության, որը փողի նկատմամբ պահանջարկը համարում է անկայուն, մոնետարիզմը ելնում է փողի նկատմամբ պահանջարկի ֆունկցիայի կայունությունից, որը պայմանավորված է խնայողության հաստատուն հակվածությամբ: Դրանից եզրակացվում է, որ շուկայական համակարգի արդյունավետ գործունեությունը և զարգացումը կարելի է ապահովել դրամական զանգվածի անընդհատ աճի միջոցով, որը համապատասխանում է տնտեսության պահանջներին: Իր հերթին, ներդրումների դինամիկան, որոնք դիտարկվում են որպես խնայողությունների վերափոխված ձև, որոշվում է դրամական զանգվածի փոփոխություններով:

Մոնետարիստների կարծիքով պետական կառավարման մարմինների անընդհատ միջամտությունը բերում է շուկայական կառուցվածքի աղճատմանը, զրկում է տնտեսվարող սուբյեկտներին տնտեսական կողմնորոշիչներից: Տոկոսադրույքի վրա ազդեցության միջոցով ներդրումների կարգավորումը առաջացնում է ինքնակարգավորման մեխանիզմի խախտում, բերում է շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածի կտրուկ տատանումների և ինֆլյացիայի մակարդակի բարձրացման: Ուստի նրանք գտնում են, որ տնտեսության կայունացման համար անհրաժեշտ է ապահովել փողի զանգվածի՝ շուկայի պահանջներին համապատասխան, անընդհատ, հիմնավորված աճ:

Դրամական զանգվածի մեծության և աճի տեմպերի կարգավորումն իրականացվում է թիրախավորման մեթոդով, որը ենթադրում է առաջիկա ժամանակահատվածի համար դրամական ազդեցատների աճի նպատակային կողմնորոշիչների սահմանում ելնելով արտադրական ներուժի սպասվող աճից և գների աճից, ինչպես նաև շուկայի մասնակիցների գործողություններում դրամական զանգվածի քանակական պարամետրերի հաշվառում: Թիրախավորման քաղաքականության արդյունքում գների կայունացումը և ինֆլյացիայի համահարթումը տանում է մրցակցության խթանման: Այս պայմաններում տեղի է ունենում հավասարակշիռ գների մեխանիզմի վերականգնում, ինչը կողմնորոշում է ներդրողին դեպի առավել շահութաբեր ոլորտներ: Ներդրումային գործընթացի վրա ազդեցության նպատակով պետությունն օգտագործում է նաև հարկային բեռի իջեցման, բյուջեի պակասուրդի կրճատման և այլ մեթոդներ: Դրա հետ միասին մոնետար կանոնի կիրառումը պետք է հաշվի առնի երկարաժամկետ նպատակները: Որոշակի ժամանակահատվածում դրամական զանգվածի ընդհանուր փոփոխությունները չպետք է գերազանցեն հաշվարկային երկարաժամկետ տեմպը:

Առաջարկի տնտեսագիտության տեսակետը. Պետական տնտեսական քաղաքականության շրջադարձը վճարունակ պահանջարկի խթանման քեյնսյան հանձնարարականներից դեպի առաջարկի խթանումը, այսինքն՝ մասնավոր ձեռներեցության խթանումը, հանդիսանում է ոչ միայն մոնետարիզմի հիմնական գաղափարը, այլ նաև առաջարկի տնտեսագիտության տեսության առանցքային դրույթը: Շատ ընդհանուր դրույթներով հանդերձ՝ մոնետարիզմը և առաջարկի տնտեսագիտության տեսությունը ունեն մի շարք տարածայնություններ: Դրանցից մեկն այն է, որ ենթադրելով, որ պետական բյուջետային քաղաքականության վճռորոշ ուղղությունը պետք է լինի ձեռներեցության և բնակչության խնայողությունների

խթանումը հարկային մեթոդներով՝ առաջարկի տեսության կողմնակիցները հնարավոր են համարում այդ պայմաններում պետական բյուջեի պակասուրդի առաջացումը (եկամտային մասի կրճատման պատճառով), քանի որ համարում են, որ խթանման արդյունքում կապահովվի եկամուտների, հետևաբար նաև, դրանցից զանձվող հարկերի այնպիսի արագընթաց աճ, որը լրիվ կփոխհատուցի նախորդած հարկային կորուստները:

Մոնետարիստները նույնպես հարկային խթանման կողմնակիցներ են, սակայն ոչ թե բյուջեի պակասուրդի հաշվին, որի նվազագույնի ապահովումը նրանց կողմից դրվում է որպես առաջնահերթ խնդիր:

Այսպիսով, առաջարկի տեսության հեղինակները, ժխտելով բյուջետային պակասուրդի ֆինանսավորման քեյնսյան գաղափարները, ըստ էության, վերադառնում են դրանց ձևափոխված տարբերակով՝ դիտարկելով այն ոչ թե որպես տնտեսական գործունեության խթանման ակտիվ գործիք, այլ որպես հնարավոր արդյունք:

Ստրուկտուրալիզմ. բացի ներդրումների պետական կարգավորման նշված հայեցակարգերից՝ համաշխարհային պրակտիկայում կիրառվում են նաև այլ ուղղությունների հանձնարարականները: Այսպես, զարգացող երկրներում, որոնք ունեն բարձր ինֆլյացիայի երկարաժամկետ փորձ, ձևավորվել են կառուցվածքային ինֆլյացիայի տեսությունները: Ինֆլյացիայի մեխանիզմը կապվում է պահանջարկի կառուցվածքի հետ, որի տեղաշարժը արդյունաբերականացման պայմաններում խթանում է արտադրության և սպառման տեղաշարժերը, առաջացնում է գների աճ, իսկ հետո նաև շրջանառվող փողի զանգվածի աճ: Ստրուկտուրալիստները գտնում են, որ ինֆլյացիայի զսպման համար դրամական, գնային և ֆինանսական կարգավորման մեխանիզմների օգտագործումը բավարար չէ: Առաջին հերթին անհրաժեշտ է փոփոխություններ կատարել տնտեսության կառուցվածքում: Համաձայնվելով քեյնսականության ներկայացուցիչների հետ՝ տնտեսական աճի վրա ինֆլյացիայի ունեցած խթանիչ ազդեցության հարցում՝ ստրուկտուրալիստները գտնում են նաև, որ որոշակի պայմաններում տնտեսապես նպատակահարմար է նաև հիպերինֆլյացիան: Նրանք նշում են, որ տնտեսության առանձին հատվածների զարգացման տեմպերի տարբերությունների առկայության պայմաններում ստեղծվում են անհամասնակցություններ: Եվ այդ ոլորտներում կոշտ գների պահպանման դեպքում այդ անհամասնակցություններն առաջացնում են ինֆլյացիոն պայթյուններ: Այդ պատճառով էլ, ստրուկտուրալիստների կարծիքով, անհրաժեշտ է ակտիվ ներդրումներ կատարել այն ոլորտներում, որոնք հետ են մնում, անհրաժեշտ է վերացնել անհամասնակցությունները, նույնիսկ դրամական էմիսիայի միջոցով ներդրումների ֆինանսավորմամբ:

Ներդրումների տնտեսական կարգավորման ժամանակակից համակարգեր. ժամանակակից համաշխարհային փորձը վկայում է այն մասին, որ ներդրումային քաղաքականության մշակման վրա ազդում են տարբեր հանձնարարականներ, որոնց կիրառման արդյունավետությունը կախված է տնտեսությունում ձևավորված կառուցվածքի առանձնահատկությունների հաշվառման հանգամանքից, ներդրումային գործունեության վրա ազդող տարբեր գործոններից, տնտեսական կարգավորման միջոցառումների համընդգրկունությունից և հետևողականությունից:

Միջազգայնացման և գլոբալացման գործընթացները զարգացման արդի ժամանակաշրջանում նպաստում են

ազգային տնտեսությունների փոխկախվածությունների ուժեղացմանը, որը մոտեցնում է տարբեր մոդելներում կիրառվող մեխանիզմները: Այդ մոդելներն օգտագործվում են այնպիսի տնտեսական նպատակների իրագործման համար, ինչպիսիք են մշտական և հավասարաչափ տնտեսական աճի ապահովումը, զբաղվածության մակարդակի բարձրացումը, դրամաշրջանառության կայունացումը, բնակչության բարեկեցության բարձրացումը և կյանքի որակի բարելավումը:

Ներդրումային քաղաքականության մշակման և տնտեսական կարգավորման ժամանակակից համակարգերը հանդես են գալիս որպես պետական և շուկայական մեթոդների համակցություն, որոնց հարաբերակցությունը որոշվում է կոնկրետ իրավիճակի առանձնահատկություններով: Սոցիալ-տնտեսական անկայունության պայմաններում ուժեղացվում է տնտեսական կարգավորման պետական մեթոդների դերը, կայուն տնտեսական զարգացման դեպքում մեծանում է շուկայական մեթոդների նշանակությունը, իսկ պետությունը պահպանում է տնտեսական և սոցիալական կարգավորման ոլորտի որոշակի գործառնություններ:

1.3. Նրդրումային քաղաքականության իրականացման գործում ֆինանսական միջնորդների տեսակները և դրանց դերը

ժամանակակից շուկայական տնտեսություններում ֆինանսական միջնորդներն առաջացել են հիմնականում այն պատճառով, որ վարկառուների և վարկատուների միջև ուղղակի գործարքների հետ կապված ծախսերը հաճախ չափազանց բարձր են: Խնայողություններ ունեցող անհատները չունեն անհրաժեշտ ռեսուրսներ, ժամանակ կամ տեղեկություններ՝ գնահատելու համար հնարավոր վարկառուներին: Ֆինանսական միջնորդները մասնագիտանում են պոստեցիալ վարկառուների գնահատման մեջ և դրանով իսկ արդյունավետ հաստատություններ են ազատ միջոցները խնայողության տերերից դեպի վարկառուներն ուղղելու գործում: Ամենաընդհանուր տեսքով ֆինանսական միջնորդներն են՝ առևտրային բանկերը, ոչ բանկային ֆինանսավարկային ինստիտուտները, ներդրումային ինստիտուտները:

Առևտրային բանկեր. բանկերը հասարակությունից ընդունում են ավանդներ՝ բազմազան հաշիվներ բացելու միջոցով: Բանկերը միջոցներ են ձեռք բերում նաև ավանդային սերտիֆիկատների վաճառքից: Բանկը տոկոսագումար է վճարում իր այս պարտավորությունների դիմաց և ձգտում է այս միջոցներն ավելի բարձր տոկոսադրույքով, որպես վարկեր, տրամադրել տարբեր փոխառուների: Ավանդատուներին վճարված տոկոսադրույքի և վարկառուների կողմից բանկին վճարվող տոկոսադրույքի միջև տարբերությունը՝ սպրեդը, բանկերի եկամուտների ավանդական աղբյուրն է: Բանկային համակարգը ներդրումային պահանջարկի բավարարման համար կարևոր աղբյուր է:

Ոչ բանկային ֆինանսավարկային ինստիտուտներ. սրանց մեջ են մտնում գրավատները, վարկային ընկերությունները, վարկային միությունները, փոխառու վարկային ընկերությունները, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները, ֆինանսական կազմակերպությունները և այլն:

Գրավատները վարկային հաստատություններ են, որոնք վարկեր են տրամադրում անշարժ գույքի գրա-

վաղորմամբ, իրականացնում են նաև գույքի պահպանման գործառնություններ: Սրանց գործունեության առանձնահատկությունն այն է, որ այստեղ բացակայում է հաճախորդի հետ վարկային պայմանագրի կնքման գործընթացը: Վարկի տրամադրման դեպքում հաճախորդը գրավի դիմաց ստանում է գրավային տոմս, որի վրա նշված է լինում գրանցամատյանում հաճախորդի գրանցման համարը: Վարկային գործարքի ժամկետը լրանալուց հետո գրավադրված գույքը կարող է վաճառվել:

Վարկային ընկերությունները ստեղծվում են նպատակ ունենալով մատուցել վարկահաշվարկային ծառայություններ իրենց անդամներին՝ վարձակալական կազմակերպություններին, փոքր և միջին բիզնեսի ձեռնարկություններին կապիտալը ձևավորվում է փայաբաժինների գնման և անդամավճարների միջոցով: Վերջիններս ընկերությունից դուրս գալու դեպքում չեն վերադարձվում: Սրանք իրականացնում են նաև վարկերի տրամադրման, առևտրային և միջնորդային գործառնություններ:

Վարկային միությունները իրենցից ներկայացնում են վարկային կոոպերատիվներ, որոնք կազմակերպվում են որպես ֆիզիկական անձանց կամ փոքր վարկային ընկերությունների միավորումներ: Վարկային միության կապիտալը ձևավորվում է փայաբաժինների վճարման միջոցով, միության անդամների մուծումներից, ինչպես նաև փոխառությունների թողարկման ճանապարհով: Վարկային միություններն իրականացնում են այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են՝ ավանդների ներգրավումը, միության անդամներին վարկերի տրամադրումը, մուրհակների հաշվառումը, առևտրամիջնորդային և կոմիսիոն գործունեությունը, խորհրդատվական ու աուդիտորական ծառայությունների մատուցումը:

Փոխառու վարկային ընկերությունները վարկային կազմակերպությունների տեսակ են, որոնք սպասարկում են փոքր և միջին բիզնեսի ձեռնարկություններին: Այս ընկերության մասնակիցներ կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց անդամավճարներից էլ ձևավորվում է ընկերության կապիտալը: Այս ընկերության անդամ դառնալու ժամանակ ընդունող հանձնաժողովը գնահատում է մասնակցի վարկունակությունը, նրան տրված երաշխավորությունները, գույքային ապահովվածությունը և որոշում է վարկի տրամադրման առավելագույն չափը: Ընկերությունից դուրս գալու դեպքում մասնակիցը վճարում է իր պարտքը և ստանում է մուտք գործման մուծումն ու գրավադրված գույքը:

Ապահովագրական ընկերությունները հատույց են ստանում այն անհատներից, ու հաստատություններից, որոնք ապահովագրում են իրենց գույքը կամ կյանքը չնախատեսված ռիսկերից: Հավաքագրված միջոցները ներդրվում են պետական և կորպորատիվ արժեթղթերում:

Կենսաթոշակային հիմնադրամները պարբերաբար մուծումներ են ստանում աշխատողներից և գործատերերից՝ գոյացնելով կենսաթոշակի վճարման համար անհրաժեշտ կեսմուտներ: Սրանք իրենց բնույթով երկարաժամկետ ներդրողներ են, որոնք իրենց միջոցները տեղաբաշխում են բաժնետոմսերի և պարտատոմսերի մեջ: Մասնավոր կենսաթոշակային հիմնադրամները կառավարվում են որևէ ֆինանսական հաստատության կողմից:

Ֆինանսական կազմակերպությունները մասնագիտացնում են սպառողական ապրանքների վաճառքի վարկավորման և սպառողական վարկերի տրամադրման գոր-

ծում: Սրանց ռեսուրսները ձևավորվում են սեփական կարճաժամկետ պարտավորությունների և բանկային վարկերի միջոցով:

Ներդրումային ինստիտուտներ. սրանք իրենցից ներկայացնում են տնտեսավարող սուբյեկտներ, որոնք բացառիկ կարգով գործունեություն են ծավալում արժեթղթերի շուկայում և նրանց չի թույլատրվում զբաղվել այլ գործունեությամբ: Ներդրումային ինստիտուտներ են՝ ներդրումային հիմնադրամները, ֆոնդային բորսաները, ներդրումային բրոքերները և դիլերները, ներդրումային խորհրդատուները և այլն:

Ներդրումային հիմնադրամները մասնավոր ներդրողներից հավաքագրում են միջոցներ և դրանք ներդնում այլ թողարկողների արժեթղթերում: Առավելությունն այն է, որ նրանք լայն հնարավորություն են տալիս արժեթղթերի փաթեթի դիվերսիֆիկացման համար:

Ֆոնդային բորսան հանդես է գալիս որպես արժեթղթերի առանձնահատուկ կազմակերպված շուկա, որը գործունեություն է ծավալում արժեթղթերի առքուվաճառքի բնագավառում: Այստեղ գործող բորսայական բրոքերները գործում են ինստիտուցիոնալ և անհատական ներդրողների հանձնարարությամբ:

Ներդրումային դիլերները և բրոքերները արհեստավարժ կազմակերպություններ են: Գլխավորապես իրականացնում են միջնորդային գործունեություն ֆոնդային շուկայում և առանձին անձանց միջև:

Ներդրումային դիլերն իր անունից և իր միջոցներով գնում է արժեթղթեր՝ նպատակ ունենալով դրանք տեղաբաշխել վերջնական ներդրողների միջև:

Ներդրումային բրոքերը կազմակերպում է արժեթղթերի գնորդների և վաճառողների հանդիպումները և իրականացված գործարքների համար ստանում է միջնորդավճար:

Ամփոփելով կարելի է նշել, որ *ֆինանսական միջնորդները* ֆինանսական շուկայի յուրահատուկ միջնորդներ են, որոնք ակտիվորեն մասնակցում են դրամական միջոցների իրական խնայողությունների հավաքագրմանը: Սակայն դրանց նպատակը ֆինանսական միջոցների սպառումը չէ, այլ՝ վերավաճառքը կամ, այլ կերպ ասած, ուղղորդումը վերջնական իրական ներդրումներին: Ֆինանսական միջնորդները մի կողմից իրականացնում են տնտեսության մեջ առկա փոշիացած դրամական միջոցների հավաքագրում, մյուս կողմից դրանք վաճառում են պակասորդային բյուջե ունեցող անձանց, իրականացնում ներդրումներ: Ֆինանսական միջնորդներն իրենց գործունեության արդյունքում ֆինանսական մի շարք գործիքների օգնությամբ վերափոխում են իրենց պարտավորությունները (հավաքագրված ֆինանսական միջոցները) և դրանք համապատասխանեցնում են իրական ներդրումների բնութագրիչներին և վերջնական սպառողների շահերին: Մասնավորապես, դրանց հավաքագրած ֆինանսական միջոցները դառնում են ավելի գրավիչ անհրաժեշտ ծավալների, ժամկետների, ինչպես նաև տոկոսադրույքների (գնի) տեսանկյունից:

Այսպիսով, կարելի է նշել, որ ֆինանսական միջնորդների առկայությունը, ամբողջականությունը և հստակ գործողությունը ներդրումային քաղաքականության իրագործման հիմնական նախադրյալներն են:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՉՆԱԽԱՏՄԱՆ ԱՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԻՄՆԱԽՆՈՒՄՆԵՐ


ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԳԳ կառավարությանն առընթեր դեպարտամենտի կառավարման վարչության դեպարտամենտի, ՏՆՏԵՍԱԿՐՈՒՄԻ ղրկսոր, դրոֆեսոր

ԱՆԺԵԼԱ ՊԱՊԻԿՅԱՆ
ԳՊՏԳ Գյումրու մասնաճյուղի Ֆինանսաժառանգության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի՝ «Միջազգային ՏՆՏԵՍԱԿԱՆ հարաբերություններ» մասնագիտացմամբ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ածի ապահովումը յուրաքանչյուր երկրի տնտեսական համակարգի արդյունավետության բնութագիրն է: Ժամանակակից տնտեսական և քաղաքական պատմությունը ցույց է տալիս, որ բարձր տնտեսական ածի տեմպերը ոչ միշտ են ուղեկցվում բնակչության կյանքի որակի բարձրացմամբ: Վերջին երկու տասնամյակներում երկրների փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բարձր տնտեսական ածի մակարդակներ ցուցաբերած երկրներից շատ քչերն են արձանագրել զգալի փոփոխություններ այնպիսի կիմնախնդիրներում ինչպիսիք են եկամուտների անհավասարությունը, աղքատությունը, գործազրկությունը և այլն: Այս պայմաններում անհրաժեշտություն է առաջանում մշակելու ընդհանրական զնախատկաններ, որոնք հնարավորություն կտան առավել բազմակողմանիորեն բնութագրելու տնտեսական ածի գործընթացները, ինչպես նաև ուսումնասիրվող երկրներում բնակչության կյանքի որակի մակարդակը, ինչն էլ հենց մարդու աշխատանքի կիմնական նպատակն է:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ածի բնութագրերը տարրաբնույթ են և գտնվում են շաղկապված փոխազդեցության բարդ գործընթացում: Որպես տնտեսական ածը բնութագրող կիմնական ցուցանիշ դիտարկվում է մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը, որը, մեր համոզմամբ, հնարավորություն չի տալիս ընդհանրական պատկերացում կազմելու երկրի տնտեսական համակարգի իրական վիճակի, ինչպես նաև բնակչության կյանքի որակի և կենսասանակարգի վերաբերյալ (օրինակ՝ երկու տարբեր երկրներ կարող են ցուցաբերել տնտեսական ածի բարձր մակարդակներ, սակայն մեկում ածի գործընթացները կարող են ուղեկցվել բնակչության կյանքի որակի աճով, իսկ մյուսում, հակառակը, կան երկրները կարող են ցուցաբերել մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ-ի իրար շատ մոտ մեծություններ, սակայն բնութագրվեն հասարակության և տնտեսական համակարգի միանգամայն տարբեր տիպային հատկանիշներով) ուստի, քանակական բնութագրերի կողքին, անհրաժեշտություն է առաջանում մշակելու նաև տնտեսական ածի որակական բնութագրեր:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ածի բազմակողմանի բնութագրումը պահանջում է համապատասխան հայեցակարգային կիմքի մշակում: Մեր կողմից առանձնացվել է ընդհանրական համաթվերի կառուցման եղանակը առաջնորդվելով ՏՀԶԿ-ի «Ընդհանրական համաթվերի կառուցման ուղեցույց»-ով¹: Ըստ այդմ առանձնացվել է գործունային վերլուծության միջոցով ընդհանրական համաթվի կառուցման եղանակը: Կյանքի որակի ընդհանրական համաթվի կառուցման համար տեղեկատվական կիմք է հանդիսացել Համաշխարհային բանկի «Համաշխարհային զարգացման ցուցանիշները»², ինչպես նաև տարբեր միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից հրապարակվող համաթվերի հաշվարկման համար հավաքագրված սկզբնական տվյալների բազաները, որոնց թիվը 407 է, իսկ վերլուծության շրջանակն ընդգրկում է տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ ունեցող 109 երկրներ:



Գծապատկեր 1. Ընդհանրական համաթվի հենասյուները՝ ըստ ցուցանիշների քանակի

1. OECD, "Handbook on Constructing composite Indicators: Methodology and user guide", 2008
2. <http://data.worldbank.org/indicator> Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Համաշխարհային զարգացման ցուցանիշները»

Հավաքագրված սկզբնական տվյալները խմբավորվել են որոշակի իմաստով համասեռ խմբերի (հեմասյունների) առաջնորդվելով Համաշխարհային Բանկի ցուցանիշների դասակարգումներով³: Տվյալների համադրելիությունը պահպանելու նպատակով իրականացվել է տվյալների նորմավորում Z արժեքների եղանակով: Հետագայում, հեմասյունների մեջ յուրաքանչյուր ցուցանիշի մասնակցության աստիճանի որոշման նպատակով իրականացվել է գործոնային վերլուծություն՝ գլխավոր բաղադրիչների հաշվարկման եղանակով՝ **Realstats** ծրագրային փաթեթի գործադրմամբ, որի արդյունքում դիտարկվող երկրների համար հաշվարկվել են ընդհանրական համաթվի հեմասյունների վարկանիշային միավորները 2012, 2015 թվականների համար: Ընդհանրական գնահատականի առանձնացման նպատակով 12 հեմասյունները միավորվել են գործոնային վերլուծության գլխավոր բաղադրիչների եղանակով: Արդյունքում, հաշվարկվել են տասներկու գլխավոր բաղադրիչներ, որոնցից առանձնացվել են առաջին երկուսը, որոնք բացատրում են դիտարկվող մոդելի ընդհանուր վարկացիայի 85.85%-ը: Կարևորվում է գործոնների հակադարձ մատրիցի դիտարկումը, որը ցույց է տալիս թե հեմասյուններից յուրաքանչյուրը ինչ մասնակցություն ունի ընդհանրական համաթվի կառուցման գործընթացներում:

Կշռային գործակիցների որոշումից հետո ստանում ենք ընդհանրական համաթվով երկրների վարկանիշային միավորները:

Կառուցվածքային մոդելի միջխմբային տեղաշարժերի ուսումնասիրության համար իրականացվել է բազմաչափ լոգիստիկական վերլուծությունը Stata14 ծրագրային փաթեթի գործադրմամբ: Ներդրվել են երկու հիմնական հասկացություններ՝ երկրների սոցիալ-տնտեսական կարգավիճակ և նպատակային խմբեր: Որպես երկրի սոցիալ տնտեսական կարգավիճակ դիտարկվել է Համաշխարհային բանկի կողմից երկրների դասակարգումը ըստ եկամտի մակարդակի^{4,5}, իսկ նպատակային խմբերի նախնական դասակարգումն իրականացվել է Կյանքի որակի ընդհանրական համաթվով երկրների վարկանիշային միա-

Հեմասյունը	Գլխավոր բաղադրիչները	
	1	2
Մակրոտնտեսական միջավայր	0,6558	0,0259
Ենթակառուցվածքներ	0,7787	0,0505
Առողջապահություն	0,1853	0,1399
Պետական հատված	0,1913	0,1732
Օրինապահություն	0,0968	0,1713
Շրջակա միջավայր	0,1210	0,8695
Կրթություն	0,1847	0,3104
Աշխատուժի շուկա	0,2391	0,0837
Մասնավոր հատված	0,4554	0,0714
Միջազգային առևտուր	0,2427	0,0588
Նորարարություն	0,2831	0,0172
Գործոնի բացատրվող վարկացիան	3,4339	1,9718
Գործոնի տեսակարար կշիռը	0,6352	0,3648


Աղյուսակ 1. Գլխավոր բաղադրիչների շրջված մատրիցը

Զբաղեցրած տեղը	Երկիրը	Վարկանիշային միավորը 2012թ.	Զբաղեցրած տեղը	Երկիրը	Վարկանիշային միավորը 2015թ.
1	Սինգապուր	1.000	1	Շվեյցարիա	1.000
2	Ֆինլանդիա	0.990	2	Լյուքսեմբուրգ	0.929
3	Շվեյցարիա	0.985	3	Շվեդիա	0.918
4	Շվեդիա	0.973	4	Սինգապուր	0.916
5	Նոր Զելանդիա	0.935	5	Ֆինլանդիա	0.905
6	Նիդերլանդներ	0.923	6	Նիդերլանդներ	0.877
7	Լյուքսեմբուրգ	0.915	7	Նոր Զելանդիա	0.874
8	Մեծ Բրիտանիա	0.896	8	ԱՄՆ	0.855
9	Հոնկոնգ	0.891	9	Գերմանիա	0.850
10	ԱՄՆ	0.883	10	Մեծ Բրիտանիա	0.830
11	Գերմանիա	0.859	11	Ավստրիա	0.827
12	Դանիա	0.859	12	Դանիա	0.821
13	Կանադա	0.853	13	Հոնկոնգ	0.817
14	Նորվեգիա	0.849	14	Ճապոնիա	0.815
15	Ավստրիա	0.832	15	Չինաստան	0.813
16	Ավստրալիա	0.831	16	Նորվեգիա	0.813
17	Ճապոնիա	0.826	17	Կանադա	0.811
18	Բելգիա	0.824	18	Ֆրանսիա	0.810
19	Իռլանդիա	0.783	19	Իսրայել	0.765
20	Ֆրանսիա	0.761	20	Ավստրալիա	0.764

Աղյուսակ 2. Կյանքի որակի ընդհանրական համաթվով առաջատար երկրները, 2012, 2015թթ.

3. <http://data.worldbank.org/indicator> Համաշխարհային բանկի «Համաշխարհային զարգացման» ցուցանիշներ
 4. <https://datahelpdesk.worldbank.org/knowledgebase/articles/906519-world-bank-country-and-lending-groups>
 5. Հետազոտության շրջանակներում միջինից ցածր և ցածր եկամուտ ունեցող երկրներին տրվել է ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակը


վորների հիման վրա: Դիտարկվող կառուցվածքային մոդելում կախյալ փոփոխականը երկրների նպատակային խմբերն են, իսկ անկախ փոփոխականները ընդհանրական համաթվի տասներկու հենասյուները և երկրի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, իսկ որպես համեմատման բազա վերցվել է միջանկյալ կարգավիճակ ունեցող երկրների խումբը:



Գծապատկեր 2. Երկրների միջին խումբ ընկնելու սահմանային հավանականությունները

Ընդհանրացնելով ստացված արդյունքները կարող ենք ասել, որ որքան բարձր է երկրի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, այնքան նրա՝ երկրների բարձր խումբ ընկնելու հավանականությունն աճում է, և հակառակը: Սահմանային հավանականությունները հաշվարկվել են մաս ընդհանրական համաթվի մյուս հենասյուների համար՝ առանձնացնելով վերջիններիս սահմանային արժեքները:

Կյանքի որակի ընդհանրական համաթվի տասներկու հենասյուները կարելի է ներկայացնել որպես տնտեսական աճի որակական որոշիչներ (ղետերմիմաստներ) և այս հատկանիշից ելնելով իրականացնել կառուցվածքա-



Գծապատկեր 3. Կյանքի որակի ընդհանրական համաթվի հենասյուների սահմանային մեծությունները

յին մոդելի մեջ հենասյուների նշանակալիության աստիճանի որոշում⁶: Որպես կախյալ փոփոխական դիտարկվել է մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը՝ հաշվարկված գնողունակության համարժեքության գործակցով: Դիտարկվող երկրների պայմանային տվյալների հիման վրա կիրառվել է կշռված փոքրագույն քառակուսիների եղանակը կառուցվածքային մոդելում հենասյուների նշանակալիության մակարդակը որոշելու համար: Պայմանային տվյալների հիման վրա կատարվում է պարզագույն փոքրագույն քառակուսիների եղանակի գնահատում, հաշվարկվում են մնացորդները: Այնուհետև մնացորդների արժեքները բարձրացվում են քառակուսի: Ստացված անկյունագծային մատրիցի անդամները հակադարձվում են և այնուհետև կիրառվում կշռված փոքրագույն քառակուսիների եղանակի մեջ:

Հենասյունը	Գործակիցը	Հավանականությունը
Նորարարություն	0.300877***	0.000
Միջազգային առևտուր	0.257395***	0.000
Ֆինանսական հատված	0.174481**	0.007
Մասնավոր հատված	0.112949***	0.000
Աշխատուժի շուկա	0.144785***	0.000
Կրթություն	0.194581***	0.000
Շրջակա միջավայր	-0.119447**	0.005
Առողջապահություն	0.275692**	0.009
Մակրոտնտեսական միջավայր	0.260031***	0.000
Ենթակառուցվածքներ	0.198121**	0.0059
Օրինակաբանություն	0.136671*	0.036
Պետական հատված	0.279051***	0.000

Աղյուսակ 3. Կշռված փոքրագույն քառակուսիների եղանակով հաշվարկների արդյունքները⁷

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալները վկայում են, որ մեր կողմից առանձնացված տասներկու հենասյուները տնտեսական աճի կարևորագույն որոշիչներ (ղետերմիմաստներ) են և դրանց միջոցով կարելի է իրականացնել այս կամ այն երկրում իրականացվող բազմաբնույթ վերափոխումների վերաբերյալ ընդհանրական գնահատականի առանձնացում, որը մեծապես կբնութագրի երկրի տնտեսության իրական վիճակը (ճշգրտված R քառակուսին 0.826): Հետազոտության շրջանակներում ստացված արդյունքները վկայում են, որ Կյանքի որակի ընդհանրական համաթվի միջոցով մենք քննարկվող երկրների իշխանություններին կարող ենք առաջարկություն ներկայացնել վերջիններիս տնտեսության զարգացմանը նպաստող և սահմանափակող որոշիչների վերաբերյալ, որոնք պետք է ներառվեն իշխանությունների կողմից մշակվող բազմաբնույթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, դրանով իսկ հիմք ապահովելով այնպիսի տարաբնույթ ինստիտուտների ձևավորման և զարգացման համար, որոնք ապագայում կապահովեն երկրների կողմից բարձր տնտեսական աճը, բնակչության կյանքի որակի բարձրացումը:

(շարունակությունը էջ 47)

6. http://www.eviews.com/EViews8/ev8ecrobust_n.html

7. *, **, *** բնութագրում է վիճակագրական նշանակալիության աստիճանը (ցածրից դեպի բարձր)

(Սկիզբը էջ 38)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՉՆԱԽԱՏԱՆԱՆ ԸՆԹՈՂԱՐԱՆԱԿԱՆ ԻԻՃՆԱԽՈՒՆԻՐՆԵՐ


Բանալի բառեր. տնտեսական աճ, ընդհանրական համաթիվ, կյանքի որակ, գործոնային վերլուծություն

Հետազոտությունների հիմնական նպատակը տնտեսական աճի բազմակողմանի գնահատումն է, ինչպես նաև դիտարկվող երկրներում կյանքի որակի վերաբերյալ ընդհանրական գնահատականի առանձնացումը: Այս նպատակով 407 ցուցանիշների հիման վրա կառուցվել է կյանքի որակի ընդհանրական համաթիվը իր տասներկու հենասյուներով, որոնք նաև հանդիսանում են տնտեսական աճի որակական որոշիչներ:

Основной целью данной статьи является: многосторонняя оценка экономического роста, а также оценка качества жизни в данных странах. Для этой цели, мы создали композитный индекс Качества Жизни на основе 407 показателей, собранных в двенадцати компонентах, которые, также, могут быть представлены как качественные детерминанты экономического роста.

The main goal of this paper is to assess the level of life quality in given countries and give a multilateral assessment of the economic growth, as well. For this purpose, we built the Life Quality overall index based on 407 indicators aggregated in twelve pillars that can also be presented as qualitative determinants of economic growth.



**ՀԱՎԵԼՎԱԾ.
Կյանքի որակի ընդհանրական համաթիվով Հարավկովկասյան Հանրապետությունների ցուցաբերած արդյունքները**



Հայաստան

Բնակչություն՝ 3 մլն մարդ
ՀՆԱ (\$)՝ 10,6 մլրդ
Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ (\$)՝ 3534,86

Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ՝ (PPP, \$)՝ 8467,95
Մասնաբաժինը (%) համաշխարհային ՀՆԱ(PPP)-ի մեջ՝ 0.02%



Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը (PPP, \$), 1990-2015թթ.

Հայաստանի վարկանիշային միավորների համեմատումը ՀՀ և հարևան երկրների միջին վարկանիշային միավորների հետ

Հեմասյունը	Հայաստանի վարկանիշային միավորը	ՀՀ և հարևան երկրների միջին վարկանիշային միավորը
Նորարարություն	0,704	0,705
Առևտուր	0,321	0,382
Ֆինանսական հատված	0,391	0,369
Մասնավոր հատված	0,376	0,260
Աշխատուժի շուկա	0,328	0,313
Կրթություն	0,446	0,389
Շրջակա միջ.	0,446	0,454
Առողջապահություն	0,707	0,699
Մակրոտնտ. միջավայր	0,218	0,353
Ենթակառուցվածքներ	0,252	0,331
Օրինապահություն	0,557	0,546
Պետական հատված	0,472	0,445
Զբաղեցրած տեղը 109 երկրների շարքում	2012թ. 61	2015թ. 54

Կյանքի որակի ընդհանրական համաթվով Հայաստանի ցուցաբերած արդյունքները, 2015թ.

Տնտեսական աճին նպաստող ցուցանիշ-գործոններն են՝

- ▶ Նոր բիզնես սկսելու դյուրինություն
- ▶ Կրթական համակարգի որակ
- ▶ Իրավունքի գերակայություն
- ▶ Բանկային համակարգի կայունություն
- ▶ Սեփականության իրավունքի պաշտպանություն
- ▶ Փոքր ներդրողների շահերի պաշտպանություն
- ▶ Նորարարական կարողություններ
- ▶ ՏՀՏ հասանելիություն

Տնտեսական աճը սահմանափակող առավել խնդրահարույց ցուցանիշ-գործոններն են՝


- ▶ Ներքին շուկայում մրցակցության ինտենսիվություն
- ▶ Կոռուպցիայի ընկալման ցուցանիշ
- ▶ Գործազրկության մակարդակ
- ▶ Աղքատության մակարդակ
- ▶ Ներմուծում, ՀՆԱ%
- ▶ Արտահանում, ՀՆԱ%
- ▶ Պետական պարտք, ՀՆԱ%
- ▶ Ենթակառուցվածքների որակ
- ▶ Ֆինանսական ռեսուրսների մատչելիություն
- ▶ ՕՈՒՆ-ների զուտ ներհոսք

Վրաստան


Բնակչություն՝ 3,7 մլն մարդ
 ՀՆԱ (\$)՝ 14,0 մլրդ
 Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ (\$)՝ 3788,62
 Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ (PPP, \$)՝ 9629,96
 Մասնաբաժինը (%) համաշխարհային ՀՆԱ(PPP)-ի մեջ՝ 0.03%

Հեմասյունը	Վրաստանի վարկանիշային միավորը	ՀՀ և հարևան երկրների միջին վարկանիշային միավորը
Նորարարություն	0,661	0,705
Առևտուր	0,614	0,382
Ֆինանսական հատված	0,500	0,369
Մասնավոր հատված	0,363	0,260
Աշխատուժի շուկա	0,349	0,313
Կրթություն	0,351	0,389
Շրջակա միջ.	0,428	0,454
Առողջապահություն	0,656	0,699
Մակրոտնտ. միջավայր	0,278	0,353
Ենթակառուցվածքներ	0,272	0,331
Օրինապահություն	0,715	0,546
Պետական հատված	0,608	0,445
Զբաղեցրած տեղը 109 երկրների շարքում	2012թ. 51	2015թ. 43

Կյանքի որակի ընդհանրական համաթվով Վրաստանի ցուցաբերած արդյունքները, 2015թ.



Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը (PPP, \$), 1990-2015թթ.



Վրաստանի վարկանիշային միավորների համեմատումը ՀՀ և հարևան երկրների միջին վարկանիշային միավորների հետ

Տնտեսական աճին նպաստող ցուցանիշ-գործոններն են՝

- ▶ Նոր բիզնես սկսելու դյուրինություն
- ▶ ՕՈՒՆ-ների զուտ ներհոսք
- ▶ Օրենսդիր մարմնի արդյունավետություն
- ▶ Դատական համակարգի անկախություն
- ▶ Համախառն ազգային խնայողություններ
- ▶ Սեփականության իրավունքի պաշտպանություն
- ▶ Հանցագործությունների ցածր մակարդակ
- ▶ Օրինական իրավունքների պաշտպանություն

Տնտեսական աճը սահմանափակող առավել խնդրահարույց ցուցանիշ-գործոններն են՝

- ▶ Կրթական համակարգի որակ
- ▶ Մտավոր սեփականության պաշտպանություն
- ▶ Նորարարական կարողություններ
- ▶ Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետություն
- ▶ Ֆինանսական ռեսուրսների մատչելիություն
- ▶ Ներքին շուկայի չափը
- ▶ Վենչուրային կապիտալի հասանելիություն
- ▶ Ենթակառուցվածքների որակը

Աղբբեջան


Բնակչություն՝ 9,4 մլն մարդ
 ՀՆԱ (\$)՝ 54,0 մլրդ
 Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ (\$)՝ 95739,43
 Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ (PPP, \$)՝ 17993,43
 Մասնաբաժինը (%) համաշխարհային ՀՆԱ(PPP)-ի մեջ՝ 0,15%

Հեռաայունը	Աղբբեջանի վարկանիշային միավորը	ՀՀ և հարևան երկրների միջին վարկանիշային միավորը
Նորարարություն	0,758	0,705
Առևտուր	0,397	0,382
Ֆինանսական հատված	0,360	0,369
Մասնավոր հատված	0,261	0,260
Աշխատուժի շուկա	0,417	0,313
Կրթություն	0,255	0,389
Շրջակա միջ.	0,369	0,454
Առողջապահություն	0,665	0,699
Մակրոտնտ. միջավայր	0,324	0,353
Ենթակառուցվածքներ	0,324	0,331
Օրինապահություն	0,584	0,546
Պետական հատված	0,397	0,445
Զբաղեցրած տեղը 109 երկրների շարքում	2012թ. 58	2015թ. 53


Կյանքի որակի ընդհանրական համաթվով Աղբբեջանի ցուցաբերած արդյունքները, 2015թ.

Տնտեսական աճին նպաստող ցուցանիշ-գործոններն են՝

- ▶ ՕՈՒՆ-ների զուտ արտահոսք
- ▶ Հարկերի վճարման դյուրինություն
- ▶ Պետական պարտք, ՀՆԱ%
- ▶ Ենթակառուցվածքների որակ
- ▶ Մեծահասակների գրագիտության մակարդակ
- ▶ ՏՀՏ հասանելիություն
- ▶ Նորարարական կարողություններ
- ▶ Առողջապահական ծառայությունների որակ
- ▶ Հանցագործությունների մակարդակ
- ▶ Պատենտների թիվը 100.000 բնակչի հաշվով



Մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը (PPP, \$), 1990-2015թթ.



Աղբբեջանի վարկանիշային միավորների համեմատումը ՀՀ և հարևան երկրների միջին վարկանիշային միավորների հետ

Տնտեսական աճը սահմանափակող առավել խնդրահարույց ցուցանիշ-գործոններն են՝

- ▶ Կոռուպցիայի ընկալման ցուցանիշ
- ▶ Դատական համակարգի անկախություն
- ▶ Սեփականության իրավունքի պաշտպանություն
- ▶ Հարևան երկրների հետ հարաբերություններ
- ▶ Համեմատական հարկային բեռ
- ▶ Բանկային համակարգի կայունություն
- ▶ Կառավարության գործունեության արդյունավետություն
- ▶ Վարկերի ստացման դյուրինություն
- ▶ Խմելու ջրի հասանելիություն
- ▶ Մաքսային ընթացակարգերի ծախսային բեռ